ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿ 16

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2019-2023

Սույն զեկույցը մշակվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ-ի կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿ 16. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2019-2023

Գլխավոր հետազոտող՝ Անուշ Հակոբյան

Ներգրավված փորձագետներ՝ Արմեն Խուդավերդյան, Վարուժան Հոկտանյան,
Վարդուհի Ավանեսյան, Տիգրան Մուղնեցյան, Սոնա Այվազյան

ISBN: 978-9939-1-1871-0
© Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
www.transparency.am

Երևան
Հունիս 2024

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն զեկույցը կազմվել է «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (ԹԻՀԿ) կողմից՝ հիմնվելով «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» կազմակերպության (ԹԻ) մեթոդաբանության վրա, որն առաջարկում է այլընտրանքային մոտեցում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կայուն զարգացման նպատակներից (ԿԶՆ) 16-րդի՝ «Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ» նպատակի առաջընթացը գնահատելու համար:

Զեկույցը կարող է օգտագործվել Հայաստանի ազգային կամավոր գնահատման երրորդ զեկույցի մշակման գործընթացում՝ ի լրումն պաշտոնական տվյալների՝ օգնելով կառավարությանն ապահովել ԿԶՆ ազգային օրակարգի նկատմամբ ամբողջական մոտեցում: Բացի այդ, այն կարող է դիտարկվել որպես այլընտրանքային զեկույց՝ ի հավելումն 2024 թվականի հուլիսին կայանալիք ՄԱԿ-ի Բարձր մակարդակի քաղաքական ֆորումում Հայաստանի ազգային կամավոր գնահատման համար ներկայացվող պաշտոնական զեկույցի:

Հետազոտությունը կենտրոնանում է ԿԶՆ 16-րդի հակակոռուպցիոն օրակարգին վերաբերող թիրախներին, որոնք են 16.4-ը՝ «ֆինանսների ապօրինի հոսքեր», 16.5-ը՝ «կաշառակերություն և կոռուպցիա», 16.6-ը՝ «թափանցիկ և հաշվետու ինստիտուտներ» և 16.10-ը՝ «տեղեկատվության հասանելիություն»՝ ընդամենը 19 ցուցանիշի և 160 հարցի հիման վրա գնահատելով երկրի կատարողականը 2019-2023 թվականների ընթացքում:

Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել հակակոռուպցիոն քաղաքականության և ինստիտուտների զարգացման առումով՝ չնայած 2019-2023 թվականների ընթացքում երկրի առջև ծառացած բազմաթիվ մարտահրավերներին: Ներկայում ևս իրականացվում են մեծածավալ բարեփոխումներ, որոնք նախատեսված են Հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա 2023-2026 թթ. միջոցառումների ծրագրով, Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ և դրա 2023-2025 թթ. միջոցառումների ծրագրով, Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ և դրա 2023-2025 թթ. միջոցառումների ծրագրով, կամ որոնք բխում են ՏՀԶԿ, ԳՐԵԿՈ և այլ միջազգային կառույցների կողմից ներկայացված առաջարկություններից և այլ միջազգային պարտավորություններից:

Չնայած բոլոր ջանքերին՝ Հայաստանում հանրային և մասնավոր ոլորտներում թափանցիկության և հաշվետվողականության պակասը, փոխզսպումների և հակակշիռների անբավարարությունը, բարեվարքության թերզարգացած համակարգը շարունակում են խոչընդոտել առաջընթացը: Այս գործելաոճը, զուգորդվելով ինստիտուցիոնալ դիմադրության և բարեփոխումների դանդաղ տեմպերի, նոր կոռուպցիոն սխեմաների ի հայտ գալու և ընտրովի արդարադատության, ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսի շարունակական չարաշահման և բարձրաստիճան պաշտոնյաների ոչ էթիկական վարքագծի դրսևորումների հետ, զգալիորեն խաթարում է կառավարության նկատմամբ հանրային վստահությունը և խանգարում հակակոռուպցիոն օրակարգի արդյունավետ իրականացմանը:

Նշված մարտահրավերների հաղթահարումը պահանջում է համընդգրկուն մոտեցում, որն ավելին է քան օրենսդրական բարեփոխումներն ու ինստիտուցիոնալ հզորացումը, առկա ազգային ռազմավարությունների և միջազգային պարտավորությունների իրականացումը: Առաջընթացի քննարկմանը զուգահեռ այս զեկույցն անդրադառնում է քաղաքականության մի շարք ոլորտներում առկա մարտահրավերներին, որոնք կառավարությունից պահանջում են լրացուցիչ լուծումներ, որպեսզի հնարավոր լինի մինչև 2030 թվականն ապահովել ԿԶՆ բարեհաջող իրականացում:

Ստորև ներկայացված առաջարկությունները ներկայացվում են՝ լրացնելու Հայաստանի ընթացիկ ազգային ռազմավարություններում ներառված և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկված միջոցառումներն ու պարտավորությունները: Առաջարկվող բոլոր միջոցառումներն իրականացման փուլում պետք է ուղեկցվեն համապատասխան իրավասու կառույցների և անձնակազմերի կարողությունների զարգացմանն ուղղված ինտենսիվ գործողություններով, ներառյալ մեթոդական ցուցումների/ուղեցույցների մշակումը, վերապատրաստումը, փորձի փոխանակումը և այլն: Ի լրումն, Հայաստանում տվյալահեն քաղաքականությունը կատարելագործելու նպատակով խիստ կարևոր է բարելավել վիճակագրական տվյալների հավաքագրումը, կառավարումը և վերլուծությունը:

Առաջարկություններ

1. Ազգային ԿԶՆ գործընթաց

- ԿԶՆ ցուցանիշների մշակման և վերանայման, ԿԶՆ-ի հետ կապված գործողությունների իրականացման և մոնիտորինգի, ինչպես նաև առաջընթացի գնահատման ու ազգային կամավոր գնահատման զեկույցների մշակման գործընթացներում քաղաքացիական հասարակության դերակատարների ներգրավման և նրանց հետ խորհրդակցության համար սահմանել ներառական, կանոնավոր, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմներ,
- ապահովել արդյունավետ ռազմավարական հաղորդակցություն միտված ԿԶՆ օրակարգի, առաջընթացի և մարտահրավերների, մարդկանց կյանքի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև քաղաքացիների ներգրավման հնարավորությունների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացմանը:

2. Ընդհանուր զարգացումներ

- գործադրել բոլոր ջանքերը հակակոռուպցիոն օրակարգին աջակցող ազգային ռազմավարություններով նախատեսված միջոցառումները ժամանակին և պատշաճ իրականացնելու համար, իրականացնել բարեփոխումների արդյունավետ մոնիտորինգ և գնահատում, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռնարկել մարտահրավերների հաղթահարման միջոցառումներ՝ ուղեկցելով դրանք հանրության հետ պատշաճ հաղորդակցմամբ,
- բացահայտել և հասցեագրել կառավարության և հակակոռուպցիոն ինստիտուտների նկատմամբ հանրային անվստահության հիմնական պատճառները՝ հաշվի առնելով ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահման փաստերը, բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ոչ էթիկ վարքագծի դրսևորման դեպքերը,

օրենքների և վարվող քաղաքականությունների անարդար կիրարկման և ընտրովի արդարադատության դրվագները, ռազմավարական հաղորդակցության ձախողումները և այլն,

- փոփոխություններ կատարել Սահմանադրության մեջ խորհրդարանական քվեարկության միջոցով՝ առնվազն վերացնելու ԱԺ ձևավորման կայուն մեծամասնության սկզբունքը՝ ուժեղացնելով փոխզսպումների և հակակշիռների համակարգը և բարելավելով խորհրդարանական էթիկայի իրավական հիմքերը,
- ապահովել պատշաճ «տարածք» քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների կողմից առերևույթ կոռուպցիոն դեպքերը հետաքննելու և բացահայտելու համար՝ մասնավորապես, ձեռնարկելով միջոցներ բարելավելու նրանց աշխատանքի համար նպաստավոր միջավայրը, այդ թվում՝ տեղեկատվության պատշաճ հասանելիությունը:

3. Պայքար փողերի լվացման դեմ

- ապահովել ազգային և անդրազգային մակարդակում ֆինանսական կասկածելի գործարքների վերաբերյալ լրագրողական հետաքննություններով բացահայտված փողերի լվացման դեպքերի մանրակրկիտ հետաքննություն,
- վերահսկողության այլ մեթոդների հետ մեկտեղ ձևավորել ֆինանսական մոնիտորինգի և վերլուծության կուռ համակարգ՝ կանխարգելելու պատժամիջոցներից խուսափելու և կեղտոտ փողերը լվանալու նպատակով Հայաստանի ֆինանսական համակարգի հնարավոր չարաշահումը,
- ամրապնդել կրիպտոարժույթների օգտագործմանն ու վերահսկողությանն առնչվող իրավակարգավորումները և կատարելագործել համապատասխան իրավասու կառույցների համակարգերը փողերի լվացման դեպքերը արդյունավետ կերպով բացահայտելու նպատակով:

4. Իրական շահառուների թափանցիկություն

- ապահովել բաժնետիրական ընկերությունների և բորսաներում ցուցակված ընկերությունների իրական շահառուների թափանցիկությունը երաշխավորող արդյունավետ մեխանիզմ,
- մշակել մեխանիզմներ հանրային պայմանագրերին առնչվող որոշումների կայացման ժամանակ կապալառուի փորձը/պատմությունը պատշաճ ուսումնասիրելու (due diligence) և իրական շահառուների վերաբերյալ տվյալները հաշվի առնելու, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված ընկերությունների պարագայում շահերի բախումը կանխարգելելու նպատակով,
- ապահովել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների, այդ թվում՝ բարդ կառուցվածք ունեցող ընկերությունների իրական շահառուների գծապատկերների անվճար հասանելիությունը պատշաճ հանրային վերահսկողություն, մասնակցային և արդյունավետ կերպով տվյալների վերստուգում ապահովելու նպատակով:

5. Գողացված ակտիվների վերադարձ

- բարելավել գողացված ակտիվների բռնագրավման և վերականգնման գործընթացների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ ապահովելով առգրավված և հանրային (կամ հավատարմագրային) կառավարմանը հանձնված ակտիվների վերաբերյալ հրապարակայնորեն հասանելի տվյալներ, որոնք առնվազն ներառում են տեղեկատվություն դրանց գտնվելու վայրի, տեսակի, արժեքի, սեփականատերերի, նոր կառավարիչների, եկամուտների բաշխման և այլնի մասին,
- ստեղծել բռնագրավված ակտիվների կառավարման և եկամուտների հատկացման/ծախսման վերաբերյալ որոշումների ընդունման մասնակցային մոդել՝ հաշվի առնելով քաղաքացիական հասարակության համապատասխան դերակատարների կողմից վերհանված կարիքներն ու առաջարկները:

6. Պայքար կազմակերպված հանցավորության դեմ

- իրավապահ մարմիններում երաշխավորել բարեվարքության կուռ շրջանակի ձևավորում և կիրարկման միջոցառումներ կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքար երաշխավորելու նպատակով,
- ապահովել, որ «հանցավոր ենթամշակույթի» ներկայացուցիչների կամ այլ անձանց նկատմամբ քրեական հետապնդումն իրականացվի առանց խտրականության՝ հավատարիմ մնալով անաչառության և արդար վերաբերմունքի սկզբունքներին:

7. Ձենքի ապօրինի շրջանառություն

- ձեռնարկել միջոցներ ակտիվների օտարման/հեռացման (disposal) վերաբերյալ որոշումների, գործընթացների և վերահսկողության իրավական դաշտը և գործելակերպը բարելավելու, ինչպես նաև ոչ գաղտնի օտարման/հեռացման դեպքերի ու դրանց ֆինանսական արդյունքների հրապարակայնացման նպատակով,
- կիրառել ռիսկերի գնահատման բարդ համակարգեր, որոնք տարբեր աղբյուրներից հավաքում են համապարփակ տվյալներ, վերլուծում են օրինաչափությունները, անհամապատասխանությունները և անոմալիաները՝ բացահայտելու բարձր ռիսկային բեռնափոխադրումները և առևտուր անողներին, հայտնաբերելու մաքսանենգությունը և այլ խախտումները, կանխատեսելու երկարաժամկետ միտումները և ապագա հնարավոր խախտումները՝ հաշվի առնելով առևտրի ծավալների ավելացումը և նոր միջազգային երթուղիները:

8. Կոռուպցիայի փորձառություն և ընկալումներ

- բարելավել հակակոռուպցիոն բարեփոխումների ռազմավարական հաղորդակցությունը մատչելի (user-friendly) տեղեկատվության ծավալը մեծացնելու և, հնարավորության դեպքում, հետադարձ կապի հարթակներ ապահովելու միջոցով,
- ապահովել կոռուպցիայի կանխարգելման և իրավապահ մարմինների համարժեք արձագանքը իշխանության բոլոր թևերում և մակարդակներում ղեկավար քաղաքական ուժի անդամների և փոխկապակցված անձանց կողմից չարաշահումների բացահայտումներին՝ ապահովելով դրանց վերաբերյալ պատշաճ հանրային

հաղորդակցություն և հետադարձ կապ հաղորդում ներկայացնողների, այդ թվում՝ լրագրողների, ՁԼՄ-ների և ՔՀԿ-ների հետ,
- ներդնել ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսի չարաշահումը արդյունավետ կանխարգելելու նպատակային կարգավորումներ:

9. Հակակոռուպցիոն համակարգ և ինստիտուտներ

- միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու հակակոռուպցիոն մարմինների ինչպես նաև դատավորների ղեկավար պաշտոնների անկախությունը և արժանիքների վրա հիմնված ընտրությունը,
- ապահովել հանրային ղեկավար պաշտոնյաների (այդ թվում՝ դատավորների) և հակակոռուպցիոն մարմինների հիմնական անձնակազմի ընտրության/նշանակման/առաջխաղացման/ազատման գործընթացների, ինչպես նաև էթիկայի և կարգապահական վարույթների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, այդ թվում՝ առավել արդյունավետ հանրային վերահսկողության հնարավորության ապահովման միջոցով,
- կատարելագործել Հաշվեքննիչ պալատի կողմից հանրային ռեսուրսները և ծառայությունները արդյունավետ վերահսկելու մեխանիզմները և սահմանել պահանջ բոլոր համապատասխան հաստատությունների համար ապահովելու հետհսկողություն հաշվեքննիչ եզրակացությունների և առաջարկությունների կատարման նկատմամբ,
- ապահովել հակակոռուպցիոն մարմինների արդյունավետ և անկախ աշխատանքը՝ տրամադրելով անհրաժեշտ ռեսուրսներ, այդ թվում՝ մարդկային, նյութական և բյուջետային:

10. Կոռուպցիան մասնավոր հատվածում

- ջանքեր ներդնել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իրավասության և մեխանիզմների ամրապնդման համար՝ պատշաճ կերպով կիրառելու հակամրցակցային և այլ համապատասխան կանոնակարգերը պետական գնումներում տնտեսական մրցակցությունը պաշտպանելու համար,
- մասնավոր հատվածում ձևավորել բարեվարքության և թափանցիկության խթանման մեխանիզմներ՝ լրացուցիչ ուշադրություն դարձնելով այն ընկերություններին, որոնք գործունեության հիմքում հանրային ակտիվների, օրինակ՝ բնական ռեսուրսների օգտագործումն է:

11. Լոբբինգի թափանցիկություն

- երաշխավորել, որ պետական և ոչ պետական դերակատարների հետ հանրային պաշտոնյաների հանդիպումների և այլ փոխգործակցության թափանցիկության պահանջներն ու ընթացակարգերը չազդեն ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների գործունեության և անկախության վրա:

12. Կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման թափանցիկություն

- ուժեղացնել կուսակցությունների և նրանց ղեկավար մարմինների անդամների եկամուտների, գույքի և ծախսերի տարեկան համարժեք և մանրամասն հաշվետվություն ներկայացնելու կանոնները, ինչպես նաև ընտրություններին

մասնակցող կուսակցությունների և առանձին թեկնածուների քարոզարշավի վերաբերյալ հաշվետվողականությունը,

- ապահովել կուսակցությունների ֆինանսների, այդ թվում՝ քարոզարշավի ֆինանսավորման համարժեք վերահսկողությունը՝ վերլուծության և վերստուգման մեխանիզմները կատարելագործելու, հայտարարագրերում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալների խեղաթյուրման կամ կեղծման, ինչպես նաև օրենքի այլ խախտումների համար վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցներ կիրառելու միջոցով,
- ստեղծել ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսների օգտագործման կանխարգելման կուռ մեխանիզմներ՝ ապահովելով ԿԸՀ, ԿԿՀ և համապատասխան իրավապահ մարմինների համարժեք և ժամանակին արձագանքը,
- ընդլայնել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակը՝ տարածելով այն առնվազն համապետական կամ տեղական ընտրություններին մասնակցող կուսակցությունների վրա:

13. Պետական կառավարման համակարգի թափանցիկություն և բարեվարքություն

- մշակել մեխանիզմներ՝ ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից հետաշխատանքային գործունեության ընթացքում ողջամիտ «սառեցման ժամկետի» (cooling period) կիրառումը «պտտվող դռների» (revolving doors) պրակտիկայի կանխարգելման նպատակով,
- ապահովել իշխանության բոլոր թևերի պաշտոնյաների, այդ թվում՝ պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց՝ համայնքների ղեկավարների, 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևանի վարչական շրջանների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրումը,
- արմատապես վերանայել հանրային ծառայության առանձին տեսակների, այդ թվում՝ Ազգային ժողովի էթիկայի և բարեվարքության ենթակառուցվածքները՝ ապահովելով գործուն և արդյունավետ համակարգի ձևավորում՝ իրապես բարելավելու հանրային պաշտոնյաների վարքագիծը,
- ապահովել հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի հրապարակային և ինտերակտիվ հասանելիությունը՝ օգտատերերին թույլ տալով որոնել և առբերել անհրաժեշտ տեղեկատվությունը հայտարարագրերի բովանդակությունից,
- հանրային ծառայողների նկատմամբ կիրառել բարեվարքության ստուգումների, ինչպես նաև գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պահանջ:

14. Ֆիսկալ թափանցիկություն

- մշակել և կիրառել կառավարության ռազմավարությունների, բյուջետային ծրագրերի և ծառայությունների մատուցման նկատմամբ մոնիտորինգում հանրային ներգրավման պատշաճ մեխանիզմներ,
- բարելավել պետական և համայնքային բյուջեների թափանցիկությունը և մասնակցային միջոցառումները, ինչպես նաև տեղական մակարդակում բյուջեի մոնիտորինգի մեխանիզմները՝ ապահովելով տեղական կառավարման հարցերում քաղաքացիների պատշաճ ներգրավվածության պայմանները:

15. Հանրային գնումներ և պետական պայմանագրեր

- իրականացնել նպատակաուղղված միջոցառումներ գնումների գործընթացի բոլոր փուլերում (գնումների պլանավորում, գնումների ընթացակարգերի կազմակերպում, ներառյալ տեխնիկական բնութագրերի մշակում, պայմանագրի ստորագրում, պայմանագրի կատարում և կառավարում) կոռուպցիոն ռիսկերը վերացնելու համար՝ մասնավորապես, հաշվի առնելով մեկ անձից գնումների, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված կապալառու ընկերությունների և որոշումների կայացման գործընթացներում շահերի բախման հետ կապված ռիսկերը,
- ապահովել բողոքարկման արդյունավետ և արագ ընթացակարգ՝ երաշխավորելով գնումների տարբեր գործընթացները, այդ թվում՝ տեխնիկական բնութագրերի հրապարակումը, գնումների մեթոդի ընտրությունը, պայմանագրերի կնքումը, դրանցում փոփոխությունների/լրացումների, դրանց կատարման ու կառավարման որակը բողոքարկելու հնարավորությունը,
- կատարելագործել գնումների գործընթացներում հնարավոր խախտումների համար կարգապահական, վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության համակարգը:

16. Ազդարարում և հաղորդման մեխանիզմներ

- կատարելագործել ազդարարման համակարգը՝ հաշվի առնելով լավագույն փորձը, ներառյալ պաշտպանության ենթակա անձանց շրջանակի ընդլայնումը, հաղորդումների ներկայացման ուղիների և մեխանիզմների կատարելագործումը, ազդարարներին և նրանց հետ կապված անձանց համապատասխան միջոցների տրամադրումը և հաշվեհարդարից պաշտպանության ապահովումը, իրավապահ մարմինների լիազորությունների հստակեցումը, ազդարարներին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը և այլն,
- ազդարարման բոլոր ձևերի համար (ներքին, արտաքին, հանրային, ինչպես նաև էլեկտրոնային հարթակի միջոցով) ապահովել իրավասու պետական մարմնի կողմից վիճակագրության կենտրոնացված կառավարումը՝ ներառելով պաշտպանության միջոցների և գործողությունների արդյունքների վերաբերյալ տվյալները, իրականացնելով միտումների պատշաճ գնահատում և համակարգի հետագա կատարելագործմանն ուղղված քայլեր:

17. Հիմնարար ազատությունների պաշտպանություն

- միջոցներ ձեռնարկել երաշխավորելու, որ օրենսդրության ցանկացած փոփոխություն, որը կարող է ազդել քաղաքացիների կամ քաղաքացիական հասարակության խմբերի հիմնարար ազատությունների վրա, պատշաճ կերպով խորհրդակցվի համապատասխան շահագրգիռ կողմերի հետ հետագա լարվածության ցանկացած հնարավորություն բացառելու համար,
- ապահովել, որ կոռուպցիայի դեմ պայքարը ջատագովող կամ դրա մասին հայտնող ՔՀԿ-ների, լրագրողների և անհատների դեմ բոլոր հարձակումները պատշաճ կերպով և առանց խտրականության քննվեն իրավապահ մարմինների կողմից և մեղավորները, այդ թվում՝ իրավապահ մարմինների ներկայացուցիչները, ենթարկվեն պատասխանատվության,

- ապահովել ընդդեմ անօրինականությունների հանդես եկող, այդ թվում՝ առերևույթ կոռուպցիոն դրսևորումները քննադատող քաղաքացիների պաշտպանությունը գործարար սուբյեկտների կողմից նախաձեռնած՝ հանրային մասնակցության դեմ ուղղված ռազմավարական դատական հայցերից (SLAPPs) և անմիջապես դադարեցնել պետական բաժնետիրությամբ գործող ընկերությունների կողմից հարուցված գործերը:

18. Տեղեկատվության մատչելիություն

- ընդլայնել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության սուբյեկտների շրջանակը՝ առնվազն ներառելով այն պետական ձեռնարկությունները, ընկերությունները, որոնց գործունեության հիմքում հանրային ակտիվների, օրինակ՝ բնական ռեսուրսների օգտագործումն է, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունները,
- տեղեկատվության ազատության բացառությունների համար սահմանել «վնասի» և «հանրային շահի» գնահատման հատուկ թեստ կիրառելու իրավական պահանջ, որպեսզի տեղեկատվության տրամադրումը մերժվի միայն այն դեպքում, երբ դա վտանգ կպարունակի պաշտպանվող շահին իրական վնաս հասցելու առումով,
- ձևավորել մեխանիզմներ և, ըստ անհրաժեշտության, ինստիտուտներ՝ ապահովելու տեղեկատվության մատչելիության մոնիտորինգն ու վերահսկումը, համապատասխան տվյալների հրապարակումը տարբեր սուբյեկտների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև շարունակել համակարգի կատարելագործումը,
- սահմանել դատավորների կողմից տեղեկատվության ազատության վերաբերյալ գործերի քննության սեղմ ժամկետներ:

19. Բաց կառավարման տվյալներ

- ապահովել, որ պաշտոնական տվյալները բոլոր կիրառելի դեպքերում տրամադրվեն պետական կայքերում «բաց տվյալների» և մեքենայաընթեռնելի (machine-readable) ձևաչափով՝ դյուրինացնելու հանրային վերահսկողությունը և քաղաքականության հետ կապված տվյալների անկախ վերլուծությունը՝ նպաստելով որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների առավել իմաստավորված ներգրավմանը:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՖԻԿՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ*

2019-2023

ԿՁՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԺԵՔ

Թիրախ 16.4 Միավոր	82%
Թիրախ 16.5 Միավոր	85%
Թիրախ 16.6 Միավոր	79%
Թիրախ 16..10 Միավոր	75%

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Թիրախ 16.4	Թիրախ 16.5	Թիրախ 16.6	Թիրախ 16.10
Պայքար փողերի լվացման դեմ	Հակակոռուպցիոն համակարգ և ինստիտուտներ	Հանրային կառավարման համակարգի թափանցիկություն և օրինավորություն	Տեղեկատվության մատչելիություն
Իրական շահառուների թափանցիկություն	Կոռուպցիան մասնավոր հատվածում	Ֆիսկալ թափանցիկություն	
Գողացված ակտիվների վերադարձ	Լոբբինգի թափանցիկություն	Հանրային գնումներ և պետական պատվերներ	
Զենքի ապօրինի շրջանառություն	Կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման թափանցիկություն	Ազդարարում և հաղորդման մեխանիզմներ	

* *Այս գնահատման նպատակն է պարզել, թե արդյոք տվյալ երկրի օրենսդրական և ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն գործունեությունը համահունչ է միջազգային լավագույն փորձին: Այն չի գնահատում դրա իրականացման արդյունավետությունը օրենսդրական դաշտի համապատասխանությանը:*

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2018-2023

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Թիրախ 16.4

- Պայքար փողերի լվացման դեմ
- Իրական շահառուների թափանցիկություն
- Գողացված ակտիվների վերադարձ
- Ճենքի ապօրինի շրջանառություն

Թիրախ 16.5

- Հակակոռուպցիոն համակարգ և ինստիտուտներ
- Կոռուպցիան մասնավոր հատվածում
- Լոբբինգի թափանցիկություն
- Կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման թափանցիկություն

Թիրախ 16.6

- Հանրային կառավարման համակարգի թափանցիկություն և օրինականություն
- Ֆիսկալ թափանցիկություն
- Հանրային գնումներ և պետական պատվերներ
- Ազդարարում և հաղորդման մեխանիզմներ

Թիրախ 16.10

- Տեղեկատվության մատչելիություն

* https://transparency.am/hy/publication/193
https://transparency.am/hy/publication/195